

որին համեմատ, ընդ հակառակն ընտանեկան առանձին ճաշերուն կանայք կը կատարեն նոյն գործը: Ողիմպի՝ Արշակայ կինը, կ'ըսէ Փաւստոս, «զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ եւ կամ զնոցին պարզեալ գինի ճաշակէր» (123). «զիւրոց» զգուշանալու համար թունաւորուելէ իւր ոսոխին կողմանէ, եւ «նաժշտացն՝ ըստ որում անոնց գործն էր այդ, ոչ թէ ծառայից: Արդարեւ ժՖ դարուն ալ դեռ «յադախնաց» կը պատրաստուին կերակուրք՝ տան «տիկնոջ» հսկողութեամբ (Ալաւ. Գ): — Բայց ծառայութեանց մէջ կան այնպիսիք՝ որ հին ժամանակներէն ընդհանրապէս կանանց յատուկ կը թուին: Աշտարակեցւոյն մէկ կանոնը կը պատուիրէ, «մի՛ ամենեւին՝ որպէս լուսք՝ հացարար և կովկիթ և խնոցեհար ի վանս տանել կիև մարդ» (ԼԳ): Եթէ «հացարար» կանայք մինչեւ մենաստանները կը մտնէին, կը հետեւի՝ որ իրենց սովորական էր այդ գործըն աշխարհիկ դասուն մէջ ալ:

9. — Կոչնակակեր: — Հետզհետէ կը հաւաքուին հրաշիրեալք¹ կամ կոչեցեալք², որոնք երբ նստին՝ պիտի լինին կոչնակակերք³ կամ

1. Մտթ. ԻԲ, 4. ՂԿ. ԺԳ, 17. — 2. Դաւ. 165-7. — 3. Թագ. Ա, Թ, 13. Գ, Ա, 49. Ոսկ. Մտթ. Ա, 460, '61. Թղթ. Ա, 530, '34, 664